

ԹԱԳՈՒՀԻ ՇԻՇՄԱՆՅԱՆԻ ԵՐԿԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Թագուհի Շիշմանյան (Օրիորդ Մենիկ), Երկեր (աշխատասիրությանը Ալ. Ա. Մակարյանի), Եր., «Նաիրի» հրատ., 2015, 204 էջ*:

Բանալի բառեր–Թագուհի Շիշմանյան, Օրիորդ Մենիկ, արևմտահայ գրականություն, նորավեպ, Արքերտ Մակարյան, «Գարնան մի ասուպ», Ծերենց, 1880-ականների գրական շարժում:

Արևմտահայ նոր վիպասանության սկզբնավորման համար շրջադարձային եղավ 1883 թվականը, երբ «Արևելյան մամուլում» լույս տեսավ Թագուհի Շիշմանյանի (Օրիորդ Մենիկ) «Գարնան մի ասուպ» ստեղծագործությունը:

Մինչև այդ արևմտահայ արձակը, զարգացման ուղիներ փնտրելով, տարուբերվում էր եվրոպական թարգմանական գրականության ու գեղարվեստագաղափարական հասունություն և ավարտություն չսպասող տեղական ժողովուրդի, արկածային վեպերի միջև: Անհրաժեշտ էր գրական ընթացքի կայունություն, ստեղծագործական առանձնահատկությունների, թեմատիկ ու կառուցվածքային առանցքի ճշգրտում, որը կարող էր գալ միայն ինքնուրույն, ժանրի հատկանիշներն առավելագույնս ամփոփող և գեղարվեստական ամբողջականությամբ աչքի ընկնող ստեղծագործությունների հայտնությամբ:

Փոքր արձակի ձևավորման համատեքստում հատկապես ճշգրտումների կարիք ունեին ինչպես ժանրային հատկականությունները, այնպես էլ ժանրանվանումները: Նախորդող երկու տասնամյակների մամուլում ու առանձին հրատարակություններում ժանրային հստակ սահմանումների բացակայության, հեղինակային ու խմբագրական տարակերպ ընկալումների արդյունքում կիրառվում էին **վեպիկ, վիպակ, պատմվածք, պատկեր, դրվագ, մանրավեպ** եզրերը: Օրիորդ Մենիկի «Գարնան մի ասուպի» հրատարակությանը անուն ու քաղաքացիություն ստացավ արևմտահայ գրական-մշակութային մինչեղեռնյան կյանքի ամենանշանակալի երևույթներից մեկը՝ նորավեպը. ««Գարնան մի ասուպից» հետո էր, որ փաստորեն սկսվեց «նորավեպ» եզրի կիրառությունը և նորավեպի ստեղծագործական առաջխաղացումը:

*Ընդունվել է տպագրության 12.12.2015:

Իհարկե, «նորավեպ» ժանրանվանումը Թագուհի Շիշմանյանի հայտնագործությունը չէր: Այն «առաջին անգամ օգտագործել է Մեսրոպ Թաղիադյանը Վ. Սքոթի առիթով»¹ կամ «...տառացի արտահայտությունն է ֆրանսիացիներուն nouvelle-ին, առաջին անգամ կարծեմ գործածված **Մասիսի** հին լսմբագրապետեն (Կ. Յությունճյան)»²: Սակայն կարևոր էր նաև ժանրի հատկանիշներին ապահովումը՝ «**բանարվեստի ու ձևաբանության առումով**»³, որ բերում էր Օրիորդ Մենիկի՝ Թագուհի Շիշմանյանի «Գարնան մի ասույ» նորավեպը:

Գրողի կայացման այս ընթացքը լավագույնս ներկայացված ու քննված է պրոֆեսոր Ալբերտ Մակարյանի կազմությամբ ու աշխատասիրությամբ լույս տեսած Թագուհի Շիշմանյանի (Օրիորդ Մենիկ) երկերի հատորակում: Իր տեսակի մեջ առաջին ու միակ այս հատորն ընդգրկում է վաղամեռիկ գրագիտուհու տպագիր ու անտիպ գրական ամբողջ ժառանգությունը:

Հատորի առաջին մասում Ալ. Մակարյանի ծավալուն ու սպառիչ անդրադարձն է Թ. Շիշմանյանի (1859–1885) կյանքին ու ստեղծագործությանը՝ ընդհանուր բանասիրական, մասնավոր գրականագիտական քննությամբ հանդերձ: Արևմտահայ գրական–մշակութային կյանքի տարբեր վավերագրերի (բնագրեր, մամուլ, հուշագրություններ, նամակներ) մանրագնին ուսումնասիրությամբ, համապատասխան ծավալուն ծանոթագրություններով ու հղումներով Ալ. Մակարյանը վերականգնում է վաղամեռիկ գրողի կյանքի ու ստեղծագործության պատկերը: Գրականագետը Օր. Մենիկի կայացումը պայմանավորում է մի կողմից արևմտաեվրոպական գրականության հրաշալի իմացությամբ, որից գրագիտուհին նաև թարգմանություններ էր կատարում, մյուս կողմից՝ արևմտահայ գրական կյանքի բուռն վերելքի առաձնահատկություններով:

Վաղ մանկության տարիներից մշտապես գտնվելով հոր՝ հայտնի վիպասան Ծերենցի (Հովսեփ Շիշմանյան) կողքին՝ տաղանդավոր աղջնակը, ում Սրբուհի Տյուսաբը «**Համայն Մանկանց Թագուհի**» է կոչել, ապա նրբագեղ ու բանիմաց օրիորդը եղել է արևմտահայ ու արևելահայ գրական գործիչների՝ Մատթեոս Մամուրյանի, Արփիար Արփիարյանի, Գրիգոր ու Երվանդ Օտյանների, Պետրոս Ադամյանի հիացմունքի առարկան, մտերմություն ու նամակագրություն ունեցել նրանց հետ: Ինտելեկտուալ ու համեստ այս գրագիտուհին մինչ գրական դաշտ մտնելը արդեն իսկ մեծ ծառայություն է մատուցել հայ գրականությանը՝ դառնալով հոր ներշնչման աղբյուրը, հուսադրողն ու ոգևորողը: Ուստի Թագուհի Շիշմանյանի երկերի հատորում ընդգրկված նամակները վերականգնում են Ծերենցի վեպերի ստեղծման ընթացքը, բացահայտում դրանց արվեստի որոշ առանձնահատկություններ, անդրադառնում ստացված գնահատականներին ու արձագանքներին:

Նամակներում առաջին հերթին ներկայացվում են ժամանակի հայտնի դեմքերը, նրանց հետ հեռակա երկխոսությունները: Դրանք բացահայտում

1 **Թագուհի Շիշմանյան** (օրիորդ Մենիկ), Երկեր, Եր., 2015, էջ 39, ծանոթ. 77: Այստեղ և հետայսու մեջբերումները կատարվում են ըստ այս հրատարակության: Էջերը կնշվեն շարադրանքի տեքստում փակագծերի մեջ:
 2 **Օջական Հ.**, Համապատկեր արևմտահայ գրականության, հատ. Ե, Երուսաղեմ, 1954, էջ 151:
 3 **Հակոբյան Գր.**, Ուսումնասիրություններ և հոդվածներ, Ս. Էջմիածին, 2007, էջ 340:

են հարուստ հոգևոր ներաշխարհով ու բարձր ինտելեկտով աչքի ընկող Թագուհու աշխարհայացքը, ձգտումներն ու իդեալները, ինչպես նաև նամակների հասցեատերերի հայացքները, գործունեության մանրամասները, գրական անցուդարձի թաքնված կողմերը և այլն: Թագուհի Շիշմանյանը Կիպրոսից ուղարկած նամակներում Մատթեոս Մամուրյանի հետ խոսում է եվրոպական գրականության թարգմանության, նրա տիկնոջ հետ՝ սիրելի գրքերի ու հերոսների, հայտնի վիպասանուհի Սրբուհի Տյուսաբին պատմում է Կիպրոսի անցուդարձի մասին, իր դասընկերուհի Հերիգա Յուսուֆյանի հետ հիշում միասին անցկացրած օրերը, խոսում անձնական բնույթի տարբեր հարցերի շուրջ, տալիս խորհուրդներ:

Մարդկային հարաբերությունների ու գրականության նկատմամբ մեծ սիրո միահյուսման արտահայտության տեսանկյունից բնութագրական է 1876 թ. հոկտեմբերի 4-ով թվագրվող՝ Մատթեոս Մամուրյանին ուղղված նամակի մի հատվածը. «Ար. մամլո վերջին թերթին մեջ Վայմարեն նամակագիր մը **Ֆաուսթի** ներկայացման նկարագրություն մ'ընելով ըսած էր. Վերթերը, որ Տաճկաստանի հայոց քեզմով ծանոթացած է կամ ասոր պես բան մը, չ'են գիտեր այս խոսքը ինձի համար է ամենն ավելի, ըսի հորս, վասնզի չ'են կարծեր թե Մամուրին այս թարգմանությունը ինձի չափ շատ կարդացած մեկը ըլլա. իրավունք ունիս, պատասխանեց, միայն չ'են գիտեր թե քու Վերթեր կարդալդ որչափը Գյոթեի արժեքին և որչափը Մամուրին հիշատակի համար է» (էջ 142):

Ուշագրավ է, որ Թագուհի Շիշմանյանի նամակներում չեն շրջանցվում նաև քաղաքական հարցերը: Դրանցում ակնարկներ կան Օսմանյան կայսրության քաղաքական անցուդարձին՝ սուլթան Աբդուլ Ազիզի սպանությանը (էջ 137), Աբդուլ Համիդի գահակալությանը (էջ 133), Միդհատ փաշայի մեծ վեզիր դառնալուն, սահմանադրության ընդունմանը՝ Շիշմանյանների մտերիմ Գրիգոր Օտյանի ակտիվ մասնակցությամբ (էջ 153) և այլն:

Իսկ 1878 թվականից հետո Թագուհի Շիշմանյանի կողմից գրված նամակներն արդեն ուղարկվում են Թիֆլիսից: Այստեղ ներկայացվում է թիֆլիսյան կյանքը պոլսահայի հայացքով: Կենցաղ ու հասարակական հարաբերությունների առանձնահատկություններ, միջավայրի, հայկական թատրոնի, կրթական հիմնարկների դիպուկ նկարագրություններ, որոնք կարող են օգտակար լինել 19-րդ դարի թիֆլիսահայ մշակույթի, կովկասյան իգական դպրոցների ուսումնասիրության համար: Օրինակ՝ խոսելով Թիֆլիսի հայ աղջիկների կրթության հարցերի մասին՝ Թագուհի Շիշմանյանը նկատում է. «Այստեղ ունին հայք մեկ երկու մանչերու դպրոց և երեք-չորս աղջկանց, այս վերջինները գացի պտտելու: Մեծ փափագ ու զոհողություն ընողներ կան «աղջկանց ուսումնասիրաց» համար, որոնք սովորաբար բավական եկամուտ ալ ունին: Սակայն մեծ եղավ զարմանքս, երբ գացի Գայանյաց ուսումնարանը, չէ թե վասնզի դպրոցը գեշ վիճակի մեջ է, չէ, ընդհակառակն, շատ հառաջադիմություն ընելու հույս կա, բայց այնչափ գովեր էին, այնչափ ներբողյան կարդացեր էին մեզի, որ միտքս դրած էի թե արդեն հասած աղջիկներ պիտի տեսնիմ որ լավ հայերեն գիտեն, պատմություն և գրականության որոշ տեղեկություն ունին և ուսմունքի մեջ մինչև շատ հառաջադեմ են. կրնաք երևակայիլ թե այս գաղաբարներով երթալես վերջ ինչչափ զարմացա, երբ

տեսա, որ շատ սովորական էր իրենց գիտցածը, և անոր համար է, որ հայ դպրոցները ելնող աղջիկներ Ռուսաց գիմնազ կը մտնին» (էջ 180):

Գայանյան վարժարանի, ինչպես նաև Մարիամյան ու Անանյան դպրոցների, ընդհանրապես՝ թիֆլիսահայ մշակութային կյանքի մասին ավելի հանգամանալից Թագուհի Շիշմանյանը խոսում է Կ. Պոլսի «Մասիս» լրագրի էջերում՝ «Դես ու դեն» խորագրի տակ լույս տեսած քրոնիկներում: Թիֆլիսի ու Կ. Պոլսի, ավելի լայն՝ հայության արևելյան ու արևմտյան հատվածների միջև առկա մշակութային ու կրթական տարբերությունները գրագիտուհու խոսքը դարձնում են հետաքրքիր, բնութագրումները՝ հիմնավոր, իսկ գնահատականները՝ մեծ մասամբ անաչառ: Քրոնիկներում անդրադարձեր կան Թիֆլիսի հայ և ոչ հայ բնակչության նիստուկացին, հասարակական-տնտեսական հարաբերություններին, թիֆլիսահայ մշակութային կյանքին, ի մասնավորի՝ թատերական անցուդարձին և այլն:

Եվ նամակներում ու քրոնիկներում, և՛ հուշերում ընթերցողի առջև հանում է երիտասարդ ու մտածող կնոջ կերպարը: Նամակներում Թագուհի Շիշմանյանը ամբողջ էությանը տարված է գրականությանը, իրականությունն ու մարդկային հարաբերություններն ընկալում է իր սիրած գրքերի թելադրած ռոմանտիկ հայացքով, քրոնիկներում ինքնուրույն մտածող, սթափ դատող, իր ու ընթերցողի առաջ գրվածի համար պատասխանատվություն կրող կինն է, ով գիտակցում է, որ իր խոսքն ուղղված է պոլսեցուն, ուստիև ձգտում է լինել անաչառ, միաժամանակ դրական վերաբերմունք ստեղծել Թիֆլիսի ու թիֆլիսահայոց նկատմամբ. «Հայը պետք չէ արհամարհել Թիֆլիս, պետք է հույս ունենա այդ քաղաքին վրա, որ թեև Հայաստանի մեջ չէ՝ բայց Հայկական է և կը լինի օր ավուր, և մինչև անգամ ամենավորքը չափով պետք է առնելու այն հպարտութենն, որ ունի հազվագյուտ և տգետ Թիֆլիսցին, որ իր լեռներեն շրջապատյալ՝ մինակ այն կողմեն կը նմանի հին Աթենացվույն, որ նորա պես իր քաղաքը միայն քաղաք կ'անվանե և նորա բնակիչքը մարդ: Պետք է գիտնա նաև Կովկասի ու Հայաստանի ամեն կողմե գաղթյալ Հայը թե բնիկ Թիֆլիսցին՝ դուրսեն եկած բազմության մեջ խեղդված՝ պետք է դիտակ դնել փնտռել գտնելու համար, և Թիֆլիսու բարոյական պակասությանց և կատարելությանց ինքն է պատասխանատու մանավանդ ասկից վերջ» (էջ 82-23):

Թագուհի Շիշմանյանի ոչ գրական, սակայն ակնհայտ գեղարվեստական որակներ ունեցող գործերում զգալի է «Գարնան մի ասուպի» տաղանդավոր հեղինակի ներկայությունը: Նուրբ դիտողականություն, խոսքի հստակություն ու գիտելիքի հիմնավորվածության արտահայտություն, պարզություն, ընդհանրացումներ կատարելու ունակություն, հոգեբանական համոզություն, երբեմն՝ պարզունակ գրքային պատկերացումներ ու քարոզչականություն. սա է հատկությունների ոչ ամբողջական ցանկը, որով «Գարնան մի ասուպը» արժանացավ այդքան մեծ ուշադրության, դարձավ գրական մի ամբողջ շարժման առաջնեկը:

Գրականագետ Գր. Հակոբյանը այս նորավեպը առանձնացնում է առաջին հերթին ժամանակակից հայ կյանքի կենդանի պատկերման տեսանկյունից, ինչով այն հակադրվում էր մինչ այդ եղած «պատմական, լուսավորչական գաղափարաբանության» ընդգծմանն ուղղված «կրավորական խոսքին»:

«Հաղթահարելով ռոմանտիկ փոքր արձակի կառույցի բազմաթիվ հատկանիշներ՝ երիտասարդ գրագիտուհին պատկերում էր ժամանակակից մարդու հոգեբանությունը, արդիական կշռույթները: Մաթենիկ-Գեղարդյանց հարաբերակցությունների առանցքը, որի շուրջ, ըստ էության, համախմբված են պատումի գաղափարական ու պարագայական շերտերը (նոր սերնդի քաղաքային կենցաղի նկարագրություն, «ինտելեկտուալ» հոսք՝ ֆեմինիստական հայեցողության անթաքույց շեշտադրությամբ), պատկերագրում է հույզերի և բանականության բախման, բարոյականության ըմբռնման, պարտականության այն ոլորտը, ուր երիտասարդ մարդիկ պահպանում են իրենց անհատականությունը»⁴:

Օրիորդ Մենիկի երկերի հատորի առաջաբանում Ալ. Մակարյանը հանգամանանորեն անդրադարձել է նորավեպի հրատարակության ժամանակին, գրական իրականությանը, քննադատական արձագանքին, երկի թեմատիկ-գաղափարական առանցքին, գեղարվեստական առանձնահատկություններին: Միաժամանակ գրականագետն իրավամբ շեշտում է, որ թեև նրանում արծարծվող թեմաները կարող են հետաքրքիր լինել ժամանակակից ընթերցողին, սակայն նորավեպն այսօր ունի առավելապես գրական-պատմական արժեք:

Թեև ժամանակակից կյանքի արագընթաց ռիթմը ընթերցողին հեռացնում է գեղարվեստական գրականությունից, ի մասնավորի՝ 19-րդ դարավերջի ռոմանտիկական վիպասանության հուզիչ ու վեհ մթնոլորտից, սակայն լրահոսով ուղղորդվող մեր ժամանակների ընթացքում կարելի է պահ գտնել ու թերթելով Օր. Մենիկի երկերի հատորը՝ առնչվել գրական-մշակութային մի յուրահատուկ իրականության հետ, որն այլևս չկա: Այն 1880-ականների գրական մեծ շարժման կարևոր մասն էր, շարժում, որը մի քանի տասնամյակ անց արդեն իր ծաղկման շրջանում գլխատվեց, ընդհատվեց ցեղասպանությամբ ու մշակութային եղեռնով:

Թագուհի Շիշմանյանի (Օր. Մենիկի) երկերի հատորը վերականգնում է այդ անդառնալի ժամանակների հուշը և միաժամանակ, ինչպես նշում է այս հիանալի հատորի կազմող Ալ. Մակարյանը, հարգանքի տուրք ու փոքրիկ հուշարձան է դառնում վաղամեռիկ գրագիտուհու հիշատակին. «մի գրագիտուհու, որն ակնթարթի պես փայլատակեց հայրենի գրականության երկնակամարում ու ասուպի պես անհետացավ հեռուներում՝ սերունդներին, սակայն, թողնելով հիշարժան լուսածերպեր...» (էջ 46):

Հայկ Ա. Համբարձումյան
Բանաս. գիյր. թեկնածու

Հայկ Ա. Համբարձումյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայ ժողովրդական բանահյուսությունը («Առասպելաստեղծ աշխարհայացք և ստեղծագործական մեթոդ», 2013), հայ հին ու միջնադարյան գրականության պատմությունը, քննադատությունը («Ջուգահեռ ընթերցումներ», 2012):

4 Հակոբյան Գր., նշվ. աշխատ., էջ 340:

Summary

COLLECTED WORKS OF TAGUHI SHISHMANYAN

Taguhi Shishmanyanyan (Oriord Menik), works (examined by Al. A. Makaryan), Yerevan, “Nairi” Pub., 2015, 204 p.

Hayk A. Hambardzumyan

Key words – Taguhi Shishmanyanyan, Miss Menic, Western Armenian literature, novel, Albert Makaryan, “Falling star of the spring”, Tserents, literary movement of the 1880s.

The review presents the book of Collected Works of Taguhi Shishmanyanyan Melik-Azaryants (pen name Oriord Menik – 1859-1885). Taguhi Shishmanyanyan is the daughter of the famous novelist Tserents and also talented author of little prose. Shishmanyanyan’s short story “A Meteor of Spring” is the first in this genre in Western Armenian literature. After the publication in 1883, this work has got some large attention by the Western Armenian literary workers.

The book contains not only previously published author’s works but also unprinted literary heritage and letters. Texts are accompanied by numerous comments and thoroughly analyse of the authoress life and work by editor of the book A. Makaryan.

Резюме

ТРУДЫ ТАГУИ ШИШМАНЯН

Тагуи Шишманяян (Ориорд Меник), Труды (составлены Ал. А. Макаряном), Ереван, изд. “Наири”, 2015, 204 с.

Айк А. Амбарцумян

Ключевые слова – Тагуи Шишманяян, ориорд Меник, западно-армянская литература, новелла, Альберт Макарян, “Падающая звезда весны”, Церенц, литературное движение 1880-ых.

Рецензия представляет собрание сочинений дочери известного армянского писателя Церенца, – талантливой писательницы Тагуи Шишманяян (Ориорд Меник-1859-1885), которая получила известность благодаря своей новелле “Весенний метеор”. Сразу после публикации (1883) новелла получила восторженные отклики в литературных кругах и считается первой в этом жанре в западно-армянской литературе.

В книге собраны не только ранее уже опубликованные работы автора, но и статьи и письма, часть из которых публикуется впервые. Тексты сопровождаются многочисленными комментариями составителя и редактора книги А. Макаряна.